124 Գողգոթան է ահա կանչում մեզ վերից,

1. Գողգոթան է ահա կանչում մեզ վերից,
Մեզ դուրս հանենք տաքուկ, փափուկ տներից,
Բացենք դուռը մեր սրտերի խունացած,
Խոնարհվելով մինչև գետին՝ իջնենք ցած:

2. Արհամարհենք մենք մեր անձին ու եսին,
Աճապարենք, չմնանք ճամփի կեսին,
Տեր Հիսուսին մեր սրտերը ընծայենք,
Ներս կանչելով՝ Նրա ոտքերին փարվենք:

3. Նա կմտնի խորքերը մեր սրտերի,
Մեր մեղքերը դուրս կհանի, կների,
Կգուրգուրի, մեզ կյանք կտա ու կասի.
«Միշտ սեր խնդրեք, որ ձեր սերը չպակսի»:

4. Կյա՞նք եք ուզում, կյանքը Ինքն է՝ մեր Տերը,
Հա՞ց եք ուզում, հացը Ինքն է՝ մեր Տերը,
Ջո՞ւր եք ուզում, ջուրը Ինքն է՝ մեր Տերը,
Տո՞ւն եք ուզում, տուն էլ ունի մեր Հայրը: